

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՐՅԱՆ
Մաշտոցի անվան Մատենադարան

ԱՐՑԱՆԻ ՁԵՆԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Որքան էլ տարօրինակ թվա, իրողությունն է այն, որ Արցախի մանրանկարչության մասին, որպես ուրույն մի դպրոցի, մինչև 1980-ականների վերջը լրիվ պատկերացում չի եղել: Գրականության մեջ շրջանառվել է ընդամենը մեկ-երկու ձեռագիր. «Վախթանգ Տանգիկի ավետարանը» 1212 թվականից, ապա՝ «Խորանաշատի 1224 թ. ավետարանը» և, վերջապես Մատ. № 155 Նոր կտակարանի մասունքից ուշադրություն է գրավել պատանի իշխան Վախթանգի հետաքրքրական դիմանկարը: Այսքանը:

1980-ականների կեսերին մեզ հանձնարարվեց զբաղվել հայոց հնամենի այդ երկրամասի մատենական մշակույթով ու նկարչությամբ: Արդյունքներն անսպասելի էին. լույս աշխարհ եկան մի մեծ խումբ առաջնակարգ մատյաններ: Այսօր չես ուզում համակերպվել այն մտքի հետ, թե ինչպես երկար ժամանակ խոսվել է հայկական մանրանկարչության ամբողջականության մասին, առանց այդ կոթողներին ծանոթ լինելու:

Ուսումնասիրությունների շնորհիվ հայտնի դարձան մեկ տասնյակից ավելի գրչության խոշոր կենտրոններ, որտեղ ընդօրինակված ձեռագրերի թիվը հարյուրների է հասնում. մշամավոր կենտրոններից մեկը Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսանիստ Գանձասարն էր: XIII դ. կեսերին Վանական վարդապետի ջանքերով հիմնադրվում է Խորանաշատի գրչության կենտրոնը: Այնուհետև՝ Թարգմանչաց վանքը, Երից Մանկանց վանքը, Ծարի սուրբ Աստվածածինը կամ Գետամիջի վանքը, Գանձակը, Ամարասը, Գոչավանքը, Թեղասեր և այլն:

Այդ նույն շրջանում էլ ձևավորվում է Արցախի մանրանկարչության ուրույն դպրոցը՝ իր գործունեությունը շարունակելով մինչև XV դարի կեսը: Ըստ էության, արդեն Կիլիկիայի, Սյունիքի (Գլածոր և Տաթև),

Բարձր Հայքի, Վասպուրականի, Պոլսի և Ղրիմի հետ միասին գիտական շրջանառության մեջ մտավ նաև մի նոր կենտրոն՝ Արցախի մանրակարգական դպրոցը:

Արցախի նկարագարդ ձեռագրերը բաժանվում են երկու շրջանի. XII դ. վերջ և XIII դ. սկիզբ, ապա՝ XIII դ. վերջ և XIV դ. առաջին կես: Ժամանակի գործոնից բացի դրանք զանազանվում են ոճապատկերային առանձնահատկություններով:

Անկեղծորեն ասած համամիտ չեն եղել մեր մի քանի երախտավորների հետ (Դուրնովո, Դրամբյան, Իզմայլովա), որոնք, հատկապես Կիլիկիայի մանրանկարչության կապակցությամբ, օգտագործել են «պալատական-արիստոկրատական» տերմինը: Սակայն Վախթանգ Տանգիլի, Ջաջուռ Խաղբակյանի դուստր Վանենու պատվիրած Խորանաշատի, Ունեկի որդի Վախթանգին պատկանող վերոհիշյալ մատյանները, իրոք, արքայական են ամեն ինչով՝ պատվիրատուների իշխանական դասը, բարձրորակ մագաղաթը, գունապնակի հարստությունը, ոսկու շռայլ օգտագործումը, արտակարգ ճոխ ձևավորումը և, իհարկե, կատարման անթերի վարպետությունը: Հազվադեպ կարելի է հանդիպել միջնադարյան քրիստոնեական մտածողության և դրան համահունչ գեղագիտական պատկերացումների մարմնավորման նման դաշնության: Ի դեպ, իրավացի են եղել մեր արվեստագիտության մեծերը, երբ, հայկական մանրանկարչության բովանդակ դաշտում արվեստի վերոհիշյալ արժեքների ցուցադրման համար որպես լավագույն նմուշներ, առաջարկել են արցախյան վերոհիշյալ ձեռագրերը: Լիդյա Դուրնովոն գրել է. ««Խորանաշատի» ավետարանի նկարիչը բացառիկ ճաշակի ու նախասիրությունների տեր անհատականություն է. նայելով նրա աշխատանքներն զգում ես և՛ Կիլիկյան ձեռագրերի կատարյալ վարպետությունը, նրբացված գույները և՛, միաժամանակ, բուն արևելյան Հայաստանի արվեստի կուռ ու մոնումենտալ բնույթը: Հոգեկան խոր ապրումների, ասկետիզմի ու ապաշխարանքի, միաժամանակ բարության տրամադրությամբ ես ներշնչվում՝ ծանոթանալով Մատ. № 378 ձեռագրի թեմատիկ պատկերներին: «Աստվածամայրը մանկան հետ» և առաքյալների դիմանկարները գամում են դիտողին՝ նրան մտովի տեղափոխելով հայկական վաղ միջնադարյան կերպարվեստի գլուխգործոցները - Լմբատավանքի VII դ. որմնանկարներն ու «Շուղրութի 979 թ. ավետարանի» նկարները: Այդպես հազվադեպ է լինում»:

Հայկական մանրանկարչության և ոչ մի դպրոցում չես հանդիպի այնպիսի անսպասելի մտահղացումներ, պատկերագրական միանգամայն ուրույն ձևեր և դրանց հետ մեկտեղ՝ աչք շոյող կատարողական հմայք, գրավչություն, ինչպիսիք կան XIII դ. վերջի և XIV դարի սկզբի արցախյան մատյաններում: Այստեղ մեզանում առաջին անգամ ավետաբեր հրեշտակը աստվածային լուրը կույսին հաղորդում է սրինգ հնչեցնելով: «Տյամընդառաջում» 40 օրական Հիսուսը իր ոտքով է մոտենում Սիմեոն ծերունուն. աստվածային հրաշք: Ղազարոսի հարության տեսարանում կադրերի հաջորդականությամբ է ներկայացվում գերեզմանից հանգուցյալի դուրս գալու և Քրիստոսին մոտենալու պահը: Իսկ № 316 ձեռագրի «Խորհրդավոր ընթրիք»-ի հորինվածքը, որքան մեզ հայտնի է, եզակի նմուշ է ողջ քրիստոնեական միջնադարում: Ընթրիքի լրիվ շրջանաձև խաչագարդ սեղանի շուրջ տեղավորված են 12 լուսապսակներ, որոնց ներսում առաքյալների միայն գլուխներն են: Նրանց միանման զարմացած հայացքներն ուղղված են ձախում մատած Հիսուսին: Ի պատասխան Տիրոջ «Ձեզնից մեկը մատնելու է ինձ» գուշակությանը, առաքյալների ռիթմիկ հայացքները կարծես հարցնում են. «Ո՞վ է Տեր»:

Երբ 1988-ին այդ սքանչելի մատյանը ցուցադրվում էր Վենետիկի Դոժեի պալատում, և՛ իտալացիները և՛ թե եվրոպական երկրներից եկած հազարավոր այցելուներ նայելով դրան՝ ապշած ու զարմացած խորհում էին, թե ինչպես է հեռավոր Հայաստանում ստեղծվել նման հանճարեղ գործ:

XIII-XIV դարերի մանրանկարների գրավչությունը մեծապես պայմանավորվում է իրար լրացնող մեղմ տոների ակնահաճո գունաշարով: Կերպարներն ասես պարուրված են արծաթավարդագույն թափանցիկ քողով, որի տակից վայելչորեն շողում են զմրուխտյա կանաչը, երկնագույնը ու ոսկեգօծ մարնջամանուշակագույնը: Դրանք ունեն հոգի լուսավորող ազնիվ մի փայլ, որը մեղմում, կարծես հաշտեցնում է հավատացյալ մարդու և աշխարհի միջև եղած հակադրությունը, լավատեսական երանգ մտցնում:

Արցախյան գրչության և մատենական նկարչության նման աննախադեպ վերելքը բնականոն երևույթ էր: Տեղական մշակութային հարուստ ավանդույթներին ավելանում էր Արցախի իշխանական և հոգևոր դասի անսահման սերն ու նվիրումը արվեստի և, առաջին հերթին,

ծեռագիր մատյանների նկատմամբ: Դրանք բարձր ճաշակի և լայն իմացությունների արդյունք էին: Հայոց Արևելից կողմանք քաջ իշխաններն ու զորականները տարբեր առիթներով, երբեմն նույնիսկ իշխողների ռազմական խմբերի կազմում, լինելով Հայաստանի և կից երկրների հեռավոր անկյուններում պատերազմի թոհ ու բոհի մեջ ամեն կերպ, երբեմն ուժով, երբեմն փրկագնով ազատում էին հայկական ծեռագրերը գերությունից և բերում իրենց պատմական հայրենիքը:

Ահա այդպես, նաև այլ պարագաների բերումով, Արցախում հավաքվեցին մի մեծ խումբ մշակավոր մատյաններ: Դրանք, տեղում ստեղծված հուշարձանների հետ միասին, կազմեցին հայկական նկարագրի մատյանների եզակի ու աննման մի բույլ. հիշենք առավել կարևորները.

1. Մեծ Շեն գյուղի 909 թ. ավետարանը
2. Բանանցի Ծեր ավետարանը (X դ.)
3. Վեհափառի IX-X դդ. ավետարանը
4. Դիզակ գավառի Ցոր գյուղի 1040 թ. ավետարանը
5. «Բեգյունց» կոչվող ավետարանը (X - XI դ.)
6. Գանձակի ս. Յովհաննես եկեղեցու XI դ. ավետարանը
7. «Գյուլիստանի» կարմիր ավետարանը (XI դ.)
8. Հռոմկլայում 1166 թ. ընդօրինակված ավետարանը:

Ի դեպ, այստեղ չափազանց հետաքրքրական հիշատակագրություն կա, որը հավաստում է Արցախի իշխանների մշակութամասատ գործունեությունը. «... ես՝ Գրիգոր, որդի Հասանայ և Դովին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց՝ Ջաքարիայի և Իւանեի... զաւետարանն և զաջն սրբոյն Ստեփանոս, զոր ի քաղաքէն Կարնու բերաք ի և տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս»: Ահա այդ ընտիր ծեռագիրը ևս, «Բենգյանց» ավետարանի նման, բերվել է Արևմտյան Հայաստանից:

9. Հայկական մանրանկարչության գլուխգործոցներից մեկը՝ Հաղպատի 1211 թ. ընդօրինակված ավետարանը՝ հայ մատենական նկարչության մեջ աշխարհիկ հետաքրքրությունների արտահայտման երախայրիքը. նկարագարողումից 12 տարի անց տեղափոխվել է պատմական Արցախ և դարձել Գետաշեն գյուղի եկեղեցու սեփականությունը:

10. Բարձր Հայքից դեռևս XIII դարում Արցախ է բերվել «Թարգմանչաց» աշխարհահռչակ ավետարանը (1232 թ.), դառնալով Խաղարի

կամ Խաթրա վանքի սեփականությունը: Ենթադրվում է, որ այս ձեռագիրն էլ Դուփի որդի Գրիգորը 1243 թ. բերած լինի Արցախ:

11. Արցախ-Ուտիքի մշակութային միաջավայրում է հանգրվանել Չիկագոյի (ԱՄՆ) համալսարանի մատենադարանի № 949 (XIII դ.) հոյակապ ավետարանը, որի հիշատակարանում կարդում ենք. «Մեք՝ Գրիգոր և Վարդան հարազատք տրուպ և նուաստ քահանայք, ըստ ձեւ տեսակի կրանաւորք գոլով, ստացաք զընդիրս առաւել քան զամենայն ինչս պատուականս ձեռաց մարդկան ձգտելոց՝ զսուրբ Աւետարանս, բազում խերելեշիւք ըստ կարեաց մերում, յորս ենք տեղեակալ ի գլուխ սահմանց Խաչենոյ, ի սուրբ ուխտէն գանձասար մենաստանէ... »:

Կարելի է ձեռագրերի այս թիվը շարունակել, սակայն բերված օրինակներն էլ բավական են համոզվելու, որ XII-XIII դարերից սկսած քաղաքական ծանր պայմանների հետևանքով աշխարհով մեկ սփռված հայկական ձեռագրերի մի մասը փրկվել են արցախցիների շնորհիվ:

Իրոք, Հայաստանի ոչ մի կենտրոնում, ոչ մի ժամանակաշրջանում մնան արժեքների կուտակում չի եղել: Մեր ազգային հպարտությունը կազմող այդ հուշարձանների գոյատևումը մեծապես պայմանավորվել է Արցախի հավատացյալ ժողովրդի, խիզախ իշխանների ու հոգևոր դասի ազգանվեր ջանքերի շնորհիվ: